## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

**25 հուլիսի 2013 թ. կնքված N ԲՀԱԾՁԲ-13/9 պետական գնման պայմանագրի՝**
**2014 թվականի փետրվարի 25-ի N 2 համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան — 04 սեպտեմբերի 2014 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ), ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ագարակ>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Կ. Բարսեղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25 հուլիսի 2013 թ կնքված՝ ՀՀ Կոտայքի մարզի գ. Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման աշխատանքների կատարման N ԲՀԱԾՁԲ-13/9 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 2014 թվականի փետրվարի 25-ի N 2 համաձայնագրի (այսուհետ՝ թիվ 2 համաձայնագիր) 1.2 կետում <<սեպտեմբերի 10-ը>> բառերը փոխարինել <<հոկտեմբերի 30-ը>> արտահայտությամբ:

1.2 Թիվ 2 համաձայնագրի թիվ 3 հավելվածով հաստատված օրացուցային գրաֆիկը փոխարինել Համաձայնագրի թիվ 1 Հավելվածով հաստատվող օրացուցային գրաֆիկով:

### 2 Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև Կողմերի կողմից սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը և կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N1 հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պատվիրատու**
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011087492
ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան

**Կապալառու**
<<Ագարակ>> ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մ., գ. Փարպի,
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
<<Աշտարակ>> մ/ճ
Հ/Հ 247070005407
ՀՎՀՀ 05003862

Տնօրեն Կ. Բարսեղյան

թիվ 1 հավելված
25 հուլիսի 2013 թ. կնքված
N ԲՀԱԾՁԲ-13/9 պետական գնման պայմանագրի
2014 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 3 համաձայնագրի

# ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Կոտայքի մարզի գ. Նոր Գեղի Բանավանի դպրոցի հիմնանորոգման և կիսակառույցի ավարտման աշխատանքների կատարման

| N ը/կ | Աշխատանքների անվանումներ | Ծավալը (հազար ՀՀ դրամ) | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|---|
| | | | Սկիզբ | Ավարտ |
| 1 | Համաշինարարական աշխատանքներ | 66175.085 | Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը | 30.10.2014 |
| 2 | Ներքին ջրամատակարարում և կոյուղու ցանց, ջեռուցում, օդափոխություն. Ներքին էլեկտրասարքավորումներ | 16444.903 | Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը | 30.10.2014 |
| 3 | Կաթսայատուն, արտաքին ջրամատակարարում և կոյուղի,ջերմային ցանց, արտաքին գազամատակարարում և 0.4ԿՎ մալուխային գիծ | 18580.576 | Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը | 30. 09.2014 |
| 4 | Բարեկարգում և տարածքի ցանկապատում | 14533.791 | Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը | 30.10.2014 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 115734.355 | Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը | 30.10.2014 |

Պատվիրատու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011087492,
ՀՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Մարգարյան ______________

Կապալառու
<<Ագարակ>> ԲԲԸ
ՀՀ Արագածոտնի մ., գ. Փարպի,
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
<<Աշտարակ>> մ/ճ
Հ/Հ 247070005407
ՀՎՀՀ 05003862

Տնօրեն Կ. Բարսեղյան ______________